ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 30

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

26.05.2018թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 27-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
   (Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան)
2. ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգի հաստատումը:
   (Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան)
3. ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի առկա (2018-2022) և հեռակա (2018-2023) ուսուցման ուսումնական պլանների հաստատումը:
   (Զեկուցող՝ Ա. Դավթյան)

4. Ընթացիկ հարցեր:
   - ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, արվեստագիտության

թեկնածու Մարտին Վարդանի Հարությունյանին ԵՊՀ-ի գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին:

Որոշում 30/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը»՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել, որ կանոնակարգի 9-րդ կետով սահմանված՝ ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման մրցույթի պայմանները կիրառվելու են 2017-2018 ուսումնական տարվա ավարտից հետո անցկացվող մրցույթի պահից սկսած:
3. Ուժը կորցրած ճանաչել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2017թ. հուլիսի 8-ին թիվ 25 նիստում հաստատված «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը»:

Որոշում 30/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգը»՝ համաձայն հավելված 2-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Որոշում 30/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 3-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 21-րդ կետի 16-րդ ենթակետով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի առկա (2018-2022) և հեռակա (2018-2023) ուսուցման ուսումնական պլանները համաձայն հավելված 3-ի ։
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում 30/4

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, արվեստագիտության թեկնածու Մարտին Վարդանի Հարությունյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին

համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի ‹‹Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին›› N 615 որոշման 2-րդ՝ ‹‹Դոցենտի գիտական կոչում շնորհելը›› բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, արվեստագիտության թեկնածու Մարտին Վարդանի Հարությունյանին դոցենտի գիտական աստիճան ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, արվեստագիտության թեկնածու Մարտին Վարդանի Հարությունյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈՀ:

Գիտական խորհրդի նախագահ՝_____Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝ _____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ

12.06.2018թ.